

891.9915
իւ-28

ՏՈՒՐ ԽԱՉԱՏՐԵԱՆ

53

ԾՆՆԴԵԱՆ ԸՆԹԱՅ

ՄԵԿ ՊԱՏԿԵՐՈՒՎ

ԵՐԿՐՈՐԴ բարեփոխած տպագրութիւն



ԹԻՖԼԻՏ

Տպարան «ՀՊՕՍԱ» Մուղեսկի պերկուլ. № 8
1914

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱՅԱՏՐԵԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱՅԱՏՐԵԱՆ Կ 2011 - 075 թ
Հայոց ինքուլ-ըրբուածե ՀՅԴ.

891.995

Խ-28

ՎՃԵՆԹԵԱՆ ԸՆԹԱՅ

ՄՀԿ ՊԱՏԿԵՐՈՒՎ

ԵՐԿՐՈՐԴ բարեփոխած տպագրութեան



ԹԻՖԼԻԶ

Տպարան «ՀՊՕԽԱ» Մուղեսկի պերեուլ. № 2
1914

07.05.2013

9333

ՅԱՅՐԱ ՄԱՆՈՒԺԻ



2632
41

ԾՆՆԴԵԼՆ ԸՆԾԱՅ

Փոքրիկ Սուրէնը սենեակում պառկած սաստիկ տեսդի մէջ էր և անթարթ աչքերը բևեռել էր առաստաղին:

Նրա՝ թղթի պէս գունատ դէմքն ամբողջովին անշարժ էր. միայն շրթունքներն էին երքեմն-երբեմն՝ շարժւում՝ կարծես փսփսում ինչ որ բան:

Երեխայի կողքին, սեղանին կռացած, նրա ջահիլ գերձակուհի մայրն անվերջ կարում էր. կարի մեքենայի շխչնկոցն էր միայն, որ ընդմիջում էր սենեակի ծանր լոռութիւնը:

Մայրը խոր մտածմունքի մէջ էր.

— Էգուց Սուրբիկիս ծննդեան օրն է։ Աստուած իմ, այդ օրն անցեալ տարի, երբ ամուսինս կենդանի էր, ինչպէս ուրախ անցկացրինք։ Իսկ այժմս...

Դերձակուհին աւելի կրացրեց իր տանջուած զլուխն և արտասուքի կաթիլները սկսան զլորուիլ նրա աչքերից... իսկ մեքենայի անիւն աւելի արագ սկսեց պտտուիլ նրա ձեռքին։

— Միթէ էգուց չի պիտի կարողանամ մի ուրախութիւն, թէկուդ մի չնչին զուարճութիւն պատճառել Սուրբիկիս, որ կեանքիս միակ ճրագն

է, աչքիս լոյսն է, միակ մխիթարութիւնս, յոյսա
և ամեն ինչս է:

Շուշարած կինը մտքում հաշւում էր կարե-
վարձի համար իրեն հասնելիքը:

— Շատ շնորհակալ կլինիմ ի հարկէ, որ ով
ինչքան պարտ է՝ վճարի: Մի գուցէ տիկինը
կարեվարձից կարի, կամ բոլորովին չվճարի...

Դերձակուհու կրծքից ակամայ յոգւոց դուրս
թռաւ: Սակայն մտաքերեց իսկոյն, որ սիր
պատուիրել էր հիւանդին չվշտացնել, միշտ ու-
րախ երկար, որ չինի տկարութիւնը սաստկա-
նայ:

Երեխան իրեն յանկարծակի անհանգիստ
զգաց ու անկողնում շարժուեց: Մայրը յետ նա-
յեց ու բոնազբօսիկ ժպտաց...

— Ինչու չե՞ս խօսում, Սուրէն ջան, — հարց-
րեց մայրը, — էս է՝ կարս վերջացնում եմ, կգամ
կողքիդ կնատեմ:

Երեխան մտազբաղ երկար նայում էր մօր
աչքերին.

— Միթէ բոլոր երեխաները ծննդեան օրն
ընծաներ են ստանում, մայրիկ:

— Դու էլ կատանաս, սիրելիս, անպատճառ
կստանաս, — անմիջապէս վրայ բերեց խեղճ
մայրն և նրա սիրտը կակծից ճմլուեց:

Սուրէնը նստեց անկողնում:

— Այնպէս չէ, մայրիկ, ծննդեան օրը տար-
այ ամենաուրախ օրն է, այս: Վաղն ես բանի
տարեկան կդառնամ:

— Ինն, հոգիս, ուղիղ ինը տարեկան:

— Այո, ինը տարեկան: Իսկ յիշում ես՝ ան-
ցեալ տարի հայրիկն առաւօտ կանուխ մօտեցաւ
ինձ, մէկ-մէկ ուղիղ ութն անգամ համբուրեց և
առաց. — «Այսօր ուղիղ ութը տարեկան ես, ես
էլ ուղիղ ութն անգամ համբուրում եմ քեզ»:

— Ես էլ, հոգեակս, վաղը քեզ ուղիղ ինն
անգամ կհամբուրեմ:

— Եւ...

— Եւ կնուիրեմ քեզ քո ուզած ընծան: Իսկ
սիրտգ ինչ է ուզում, աչքիս լոյս:

— Մի սիրուն պատկերացրդ գիրք, մայրիկ
ջան, շքեղ պատկերներով, որի մէջ նկարուած
լինին գանազան կենդանիներ, թռչուններ, մար-
դիկ, սարեր, ծառեր, որոնց ես շարունակ կար-
տանկարեմ տետրերիս մէջ...

Մայրը հաշւեց, որ այգափիսի մի գիրք ամե-
նապակաս 50 կոպէկ կարժենայ, ու կըկին ա-
կամայ մի «ախ» ևս դուրս պրծաւ նրա կրծքից:
Տղան անհանգիստ նայեց մօր երեսին:

— Մայրիկ, հիւանդ հօ չես:

Մայրն իսկոյն տեղից վեր կացաւ, մօտե-
ցաւ Սուրէնին, նստեց կողքին և ժպտազէմ
ցամքած ձեռներով սկսեց շոյել երեխայի գլուխն
ու դէմքը:

Կարծես այդ երեկոյ տղայի ճակատն աւելի
էր այրում, սիրտն աւելի բարախում:

— Զէ, իմ սիրելիս, վաղը քո ծննդեան օրն
է, իսկ ծննդեան օրն ուրախ պիտի անցկացնենք:

Տես, էգուց անպատճառ վեր կացած լինիս և
հագնուած:

Երեխան աւելի ամուր սեղմուեց մօրը, յե-
տոյ նորից պառկեց բարձի վրայ:

Մայրը կրկին կարը ձեռն առաւ, աշխատում
էր թաւշեայ զգեստը կարել վերջացնել, որ ա-
ռանց այն էլ ուշացրել էր...

Որդեսէր մօրն ան վերջ մաշում էր այն
միտքը, թէ ի՞նչով պիտի գնի խոստացած ընծան
իր անգին Սուրբիկի համար...

Զեռագործի վերջին կարը կթնել վերջաց-
րել էր. նա զգուշութեամբ ծալեց զգեստը մեծ
թղթարկում, ապա մօտեցաւ երեխային, ասաց.

— Սուրէն ջան, կարճ ժամանակով քեզ մե-
նակ եմ թողնում, դու չես վախինայ, չէ:

— Չէ որ, մայրիկ ջան, ես միշտ մենակ եմ
մնում, երբ դու գործով տանից գնում են, Գի-
տես, մայրիկ, մենակ մնացած ժամանակս ինչի՞
մասին եմ մտածում. միշտ քո մասին և երբէք
չեմ տիսրում: Բայց այսօր շուտ դարձիր տուն.
Ես ուզում եմ որ շուտ լուսանայ այս գիշերը.—
ասաց Սուրէնը և փոքրիկ ձեռներով փաթաթուեց
մօր վզով:

— Ես իսկոյն կվերադառնամ, այստեղ՝ մօ-
տիկ է, — նայեց մայրն երեխային անսպառելի
սիրով և շտապով հեռացաւ:

Լուսինը բարձրացել էր երկնակամարն ու
իր ոսկեգոյն լոյսը լցրել սենեակը: Սուրէնը
սպասում էր: Նա պառկած էր անշարժ, ականջ
էր դնում մօր ոտնաձայնին. երբեմն էլ նրան ե-
րկում էր՝ թէ ահա՝ ով որ բարձրանում սանդու-
ղով և այդ մէկն իր հայրն է. ձեռին մի մեծ
պատկերազարդ գիրք և մտնում սենեակը. «Բա-
րի լոյս, Սուրէն, այսօր դու ճիշտ ինը տարե-
կան ես. արի, ես քեզ ինն անգամ համբուրեմ:
Մէկ... երկու...»:

Եւ իբր թէ Սուրէնը ձեռը պարզում էր դէ-
պի այն գիրքն ու իր երեսին զգում էր հայրիկի
շնչառութեան տաքութիւնն և նրա կոշտ բեխերի
ծակծկոցը...

Հիւանդ երեխան զառանցում էր... . . .

Դերձակուհին երբ մտնում է զգեստատիրոջ
տունը, աղախինը դիմաւորում է նրան նախա-
սենեակում հետևեալ խօսքերով:

— Ինչու այդպէս ուշացրիր, տիկինը խիստ
չարացել է:

Աղախինը ձեռքից առաւ թղթարկը, տարաւ
միւս սենեակը:

Դերձակուհին իր շուրջն է դիտում:
Դուան բացուածքից երկում էր դահլիճը՝
ամբողջովին լուսաւորուած: Ի՞նչ կահկարասիք,

ի՞նչ հայելիներ, թաճկապին գորդեցր: Իսկ մետաքսէ բազմոցի վրայ նստած գիրքով բազմեցրած էր երեխայշափ մի տիկնիկ՝ շքեղ հագնուած...

Ամեն կողմից լսում էին ուրախ մանկական ձայներ:

Դերձակուհին ակնապիշ նայում էր այդ բոլոր քեղութիւններին. նա մտքով տարուել էր...

— Այդ տիկնիկի փողով կարելի էր Սուրենիս համար ոչ միայն պատկերազարդ գիրք գնել, այլ և նրան լաւ կերակրել, խնամել և բժշկել:

Դերձակուհին չնչում էր ծանր...

Շատ սպասեցնելուց յետոյ վերջապէս աղախինը յայտնում է և տալիս նրան դադարկ թըղթարկղը. իսկ կարելավարձի մասին՝ ոչ մի խօսք:

Դերձակուհին խնդրում է կարելավարձը:

— Այսօր հիւրեր կան մեղ մօտ, բոլորովին ժամանակ չունին քեզնով զբաղուելու, — ասում է աղախինն և հեռանում միւս սենեակը:

Մի քանի ըոպէից յետոյ նա դուրս է բերում հաշիւը.

— Տիկինը կվճարի այն ժամանակ, երբ համոզուի որ զգեստը օրիորդի հազին լաւ է հըստում, իսկ հիմա բոլորովին ժամանակ չունի չափելու:

Դժբախտ կինն այս խօսքերը լսելիս՝ քիչ մնաց ընկնէր, եթէ չբունէր մօտի աթոռից: Նա հազիւ լսելի մրմնջաց.

— Ասա տիկնոջը, որ հիմա վճարի. եթէ

նկատուի որիէ պակասութիւն, յետոյ կդամ կուզդեմ: Երեխաս տանը հիւանդ պառկած է:

— Հիւմնդ է երեխադ: Այդ ի՞նչ ասացիլը՝ հիւանդութեան անուն չտաս, թէ չէ՝ տիկինը կարածդ շորը չի վերցնի. նա սաստիկ վախենում է վարակիչ հիւանդութիւններից, — պատասխանեց աղախինն այնպիսի ձայնով, որ գերձակուհին էլ չկարողացաւ բան խօսել:

Թշուառ կինը գողդոջուն քայլերով իջնում է սանդուղներից: Դուրս գալով փողոցը, կրթնում է պատին՝ բարձրածայն հեծկլտում.

— Ի՞նչ անհմ հիմա, որ ջուրն ընկնեմ:

Նա մտաբերում է որ իրեն էլի պարտ էին ուրիշ երկու կանայք: Մէկը հէնց պատուերի ժամանակն էր յայտնել, որ տօներից յետոյ կվճարի. իսկ միւսը սպառնացել էր ու այլ ևս պատուէր չիտալ, եթէ վճարի մասին խօսք բանի: Ամեն կողմից ճանապարհը փակ էր մասմոլոր կնոջ առաջ, ոչ մի ելք: Տանը ծախելու իրեղէն չէր մնացել, բոլորը ծախուած, կամ զրաւ էր դրուած: Նա պատրաստ էր տանել, զրաւ դնել հազի վերաբկուն էլ, եթէ ուշ չլինէր և գրաւատները բաց լինէին:

Ցուրտը թէն սաստիկ էր, բայց գերձակուհին այդ չէր զգում. նա քայլում էր շտապով, որովհետև Սուրենը տանը մենակ սպասում էր:

— Տէր Աստուած, ինչով գնեմ Սուրիկիս համար պատկերազարդ գիրը, — մատառում էր անձար մայրն և զիտէր, որ եթէ երեխան խոս-

սացած ընծան չստանայ, ակարութիւնն աւելի
պիտի սաստկանայ:

— Ո՞հ, իմ անգին, իմ անուշ բալա, — հե-
ծում էր անմխիթար մայրը, Նրա ոտները ցըտից
և յոդնածութիւնից արճճի պէս ծանրացել էին:

Վերջապէս նա մօտենում է իրենց տանը,
կանգ է առնում, աշխատում է հոգեկան յուղ-
մունքը հանգստացնել և ապա ներս մտնել:

Այդ վայրկենին նրա ականջին լսելի է լի-
նում. մի աղիղողում թոյլ մլաւոց: Դերձակուհին
նայում է շուրջը, տեսնում կատուի մի սպիտակ
ձագ, որ կծկուել էր գետնայարկի լուսամտին և
ցրակից գողում էր. գերձակուհու գութը շար-
ժուեց:

— Խեղճ կենդանին այստեղ ցըտից և սովից
կսատկի, — ասում է նա և իսկոյն իր ձեռն է
առնում նրան:

Նոյն բռպէին մի գեղեցիկ միտք է ծագում
նրա գլխում.

— Սա լաւ ընծայ կլինի Սուրբիկիս համար:
Կատուն գրկած բարձրանում է նա տան
սանդուղներով, բաց է անում կամացուկ նա-
խասենեակի դուռն, ականջ դնում. — սենեակում
կատարեալ լոռութիւն էր տիրում. Սուրէնն էլ
խորը քնած:

Սնմիջապէս նա կատուին կերակրում է կա-
թով, մի շոր է փոռում վառարանի մօտ և կա-
տուին պառկեցնում:

Երբ մայրը նորից սենեակն է մտնում,

Սուրէնը մահճակալի վրայ անհանգիստ ան ձաջի
կողքի վրայ շուռ էր գալիս և սաստիկ տենդի
մէջ զառանցում էր:

Մայրը նստում է կողքին՝ աթոռի վրայ,
վլուխը դնում աթոռի կոնակին և անթարթ աշ-
քերով նայում որդու դունատ դէմքին:

— Տէր Աստուած, Տէր Աստուած, միթէ
այս միակ մխիթարութիւն-ս էլ կիսես ինձնից, —
մտածում էր նա շարունակ և արտասուքը լիա-
ռատ ծորում նրա այտերովը:

Հիւանդը գիշերը ծանը է անցկացնում. մէկ
անգամ է միայն զարթնում մինչեւ առաւօտ, խուր
ձայնով ջուր պահանջում և կըկին ընկնում մահ-
ճակալի վրայ:

Ողջ գիշերը մօր աչքին քուն չեկաւ: Լու-
սադէմին միայն, երբ ձմեռուայ արեն իր թեք
ճառագայթները գցել էր սենեակի լուսամտով՝
ները՝ ուղիղ երեխայի մահճակալի վրայ, Սու-
րէնը յանկարծ տեղից վեր թռաւ, նստեց ան-
կողնու մէջ:

Մայրն այդ պահին մօտը չէր. Սուրէնը
նայում է կողքի աթոռին, սեղանին, բարձի տակ,
— ոչ մի ընծայ, ոչ մի պատկերազարդ գիրք:
Այդ բոպէին նախասենեակի դուռը բացւում է և
շէմքին երեաց մայրը: Նա ձեռքին բռնել էր
կատուի սիրուն ձագը՝ մաքուր լուացած, զգին
կապոյտ ժապաւէն կապած:

— Ահա, տես, իմ աչքիս լոյս, քեզ ինչ ըն-
ծայ եմ բերել: Շատ տարի այսօրին հասնես՝

առողջ, ուրախ: Արի, ինն անգամ համբուրեմ քեզ, չէ՞ որ դու այսօր ուղիղ ինը տարեկան ես:

Երեխայի գունատ գէմքն ուրախութեամբ ցուեց: Նա հրճուանքով վիտում էր կատուին: Ակնդանի կատու, նկարածից աւելի սիրուն:

Սուրէնի ուրախութեանը չափ չկար: Աշքերը լայն-լայն բացած՝ նայում էր փոքրիկ կենդանուն. կատուն էլ գոհ էր իր վիճակից՝ տաք սենեակ, փափուկ անկողին:

Փիսիկը մէջքն ուսցրեց, զլուխն երկարաց-նելով՝ բեխաւոր գունչը թափահարելիս՝ Սուրիկի ծիծաղն այնպէս շարժեց, որ մտատանջ մայրը մի բոպէ մոռացաւ իր ամբողջ վիշտը, ինքն էլ սկսեց նրա հետ ծիծաղել:

—Մայրիկ, մայրիկ, տես, տես, փիսոն ինչպէս երկարեց. մոմոռում է՝ լսում ես:


Սուրէնը փորձում է շփել փիսիկի աղուամազը ու կրկին ծիծաղում: Զազը աւելի մօտեցաւ Սուրիկին, մանրիկ ատամներով սկսեց խաղալ Սուրէնի մատների հետ, շուռ գալ մէջքի վրայ և թաթիկներով խաղալ նրա ձեռների մատների հետ:

—Օհօ, ինչ շուտով սիրեց քեզ, Սուրէն ջան:

—Իսկ ես պակաս եմ սիրում փիսիկին, — պատասխանում է Սուրէնը և խնդրում է հապցուել բուզը, որ երկար կարողանայ նստել:

Մայրն անմիջապէս կատարում է նրա խնդիրը: Կատուի ձագը Սուրիկի համար մի մեծ ու-

րախութիւն էր, Սուրէնը դեռ իր բաժին կաթից լցրեց փոքր աման, դրեց նրա առաջ: Փիսիկը կծկուեց և սկսեց իր երկար ու նեղ լեզուով



լակել կաթը, յետոյ՝ երբ կշացաւ, փոշտաց ու գունչը թաթիկներով սրբեց: Առաւօտից սկսած Սուրէնը ծիծաղելուց չէր

գաղարում։ Կատուի իւրաքանչիւր շարժուածքը նրան ծիծաղալարժ էր. իսկ մօրն այնպէս էր թւում, կարծես թէ այդ օրը մեռած ամուսինն էլ իրենց հետ է, նա էլ է մտիկ տալիս պատից կախած պատկերի սկ շրջանակի միջից և խեղճ կինն առաջին անգամ այդ ամբողջ սուզի տարում ուզեց երգել, երգել այնպէս, ինչպէս երգում էր մի տարի առաջ Սուրէնի ծննդեան օրը։

Կէսօրը մօտ էր. Սուրէնը շատ խաղալուց յոգնել էր. մայրը հազիւ համոզեց պառկել, միքիչ հանգստանալ։ Սուրէնը ինդրեց մօրը, որ փիսիկին էլ իր կողքին տախտի վրայ պառկեցնի. Մի ձեռքով շարունակ շոյելով ձագի աղուամաղ մէջքը և նրա հետ մի ինչ որ երգի եղանակ մուռալով։ Սուրէնը աննկատելի կերպով քնեց, քնեց խաղաղ և երկար։

Մայրը ձեռները ծալած՝ սեղանին կըթնած՝ ականջ էր դնում Սուրէնի շնչառութեանը։ Երեխայի կուրծը հանգիստ բարձրանում իջնում էր, երբեմն էլ կարծես ժպտում էր ընի մէջ. այսերն առել էր կարմրել. իսկ ձեռքը շարժւում էր՝ կարծես ուզում էր ձագուկին շոյել։

Խանդակաթ մօր սիրտը որդու փրկութեան յուսով է լցուում։

Ճաշից ետ սովորականի պէս գալիս է բժիշկը, միայն այս անգամին Սուրէնին մահճակալին նստած է տեսնում, կատուի ձագի ոստիւնների վրայ բարձրածայն ծիծաղելիս. կատուն վազվում էր թելլ կոճի ետենից ու աշխուժով խաղում։

— Այդու չարաճճի, իմացայ վերջապէս՝ թէ տւմ համար էիր պահում քո ուրախութիւնը։

Քննում է հիւանդին բժիշկը, և քանի աւելի էր քննում, այնքան շատանում էր ուրախութիւնը։

— Ապրես, զու Սուրէկ, ախր ասում էի, որ կտրիճ տղայ ես. Դէհ, հիմի սրանից ետ շուտով կոկսես վազվու փիսիկիդ հետ սհնեակում։

Բժիշկի յուսալի խօսքերը դերձակուհու աչքերին փայլ տուին. նա անհամքեր հարցնում է։

— Ուրեմն՝ վտանգն անցել է պարոն բժիշկ։

— Միանգամայն անցել է. աչքներդ լոյս, գուարճալի խաղը հրաշքներ է գործում։

Ծերունի բժիշկը նախասենեակում վերաբեռն է հագնում, որ դնայ, դերձակուհին ամուլսեղմում է բժշկի ձեռքը։

— Ոչ, տիկին, շնորհակալութեան արժանի է փիսիկը, ոչ թէ ես։

Սյդ ըոպէից սկսած փիսիկը դարձաւ խակապէս խեղճ կնոջ համար ծննդեան ընծայ, որովհետեւ զգում էր, որ այդ օրուանից սկսել է ինքնապքել վերստին ծնուել։

Այդ օրը չափազանց ուրախ անցաւ թէ Սուրէնի և թէ դերձակուհու համար։

Միւս առաւոտ՝ Սուրէնն այնքան էր կաղդուրուել, որ աետը ծնկանը դրած՝ նկարում էր փիսիկին. իսկ չարաճճի փիսիկը ըոպէ անգամ հանգիստ չէր նստում մի տեղու Ո՞րչափ էր չարչարում փոքրիկ նկարիչը և աշխատում էր իրեն

առողջացնողին քիչշատ նման պատկերով դուրս
քերել:

Տասն օրից յետոյ Սուրէնն անկողնուց վեր
էր կացել, նստել սեղանի մօտ. իսկ կատաւն
նստել էր դիմացի պատուհանը՝ տաքանում էր
արեի ճառագայթների տակ: Սուրէնը շտապով
նկարում էր կատուին պառկած դիրքով և ուրա-
խութիւնից բացականչեց, որ վիսիկը նման էր
հանուել:

Անցան շատ տարիներ: Սուրէնը մօր աշխա-
տանքով գարձաւ յայտնի նկարիչ:

Ես պատահմամբ այցելեցի նրա պատկերնե-
րի ցուցահանդէսը: Նրա նկարների մէջ տեսայ
խեղճ ու կրակ երեխաներ, բեռնակիր մշակներ,
փողոցներում թափուած բանւորներ:

Բոլոր նկարների մէջ իմ աչքը աւելի գրա-
ւեց մի նկար: — Սենեակի խորքում, տախտի
վրայ, անկողնու մէջ նստած էր մի հիւանդ,
զունատ երեխայ. նրա վերմակի վրայ կանգնած
էր կատուի ձագ, կապոյտ ժապաւէնը վզին, որ
նայում էր ուղիղ երեխայի աչքերին: Այդ մօ-
մենտին երեխայի գէմքը հրճուանք և ուրախու-
թիւն էր արտայայտում. իսկ մայրը՝ մի կողմ
կանգնած՝ աչքը իր սիրասուն որդուց չէր կըտ-
րացնում, կարծես ուզում էր հարցնել.

— Տէր Աստուած, Տէր Աստուած, միթէ
պիտի սրան էլ խլես ինձնից:

Երբէք չեմ մոռանայ այդ պատկերը

Դիբը ենթարկվել ե ախտահանման
10/42. 42թ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0398963

Վաճառում են նոյն հեղինակի

- | | | | |
|----|---|--|-------|
| 1. | Եապօնիս | | 3 լ. |
| 2. | Ծիծաղաքեր, պատկերագարդ, 200-ի չափ
ընտիր զուարձախօսութիւն—անեկդօտներ,
երկրորդ տպագը. բարեփոխած | | 30 լ. |
| 3. | Զանգի, երկու պատկերով | | 5 լ. |
| 4. | Ծննդեան լնձալ, մէկ պատկերով, երկրորդ
տպագ. բարեփոխած | | 5 լ. |

Դիւն ի 5 կլՊիկ.

Վերև յիշուած զրբոյկների պահեստը մեզ մօտ
է. զումարով գնողներին միծ զեղջ: Ցանկացողները
կարող են զիմել ամեն ժամանակ մեր մշտական հառ-
ցէով՝ Տիֆլուս, Լասոգորսկի պերելուք № 6. Խա-
тару Խաչառյան:

Ծախւում են նոյնպէս ամեն տեղերի զրա-
վաճառների մօտ: